

ՁԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ 2015-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 3131-Ա հրամանով Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականից գործադրվել է վիրուսային հեպատիտների վերահսկման և կանխարգելման ծրագիրը: Ծրագրի գործադրման արդյունքում միջոլորտային համագործակցության զարգացման նպատակով բոլոր մարզերում և Երևանի քաղաքապետարանում ստեղծվել են վիրուսային հեպատիտների կանխարգելման միջոցառումները համակարգող հանձնաժողովներ, որի ստեղծման արդյունքում հնարավորություն է ընձեռվում այդ աշխատանքները իրականացնել բոլոր մակարդակներում՝ հանրապետական, մարզային, տարածաշրջանային՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կառույցներին: ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի 15 հոկտեմբերի թիվ 2864 – Ա հրամանով ստեղծվել է վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի կանխարգելման հարցերով զբաղվող գիտամասնագիտական խորհուրդ, որը հնարավորություն է ընձեռել վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկողության միջոցառումները իրականացնել ապացուցողական հիմքերով:

Կանոնակարգվել է վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համակցված համաճարակաբանական հսկողության համակարգի գործունեությունը, մշակվել և սահմանված կարգով հաստատվել են ոլորտը կանոնակարգող իրավական ակտեր, որոնց միջոցով կանոնակարգվել է վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համակցված համաճարակաբանական հսկողության համակարգի գործունեությունը, քրոնիկ հեպատիտների ախտորոշումն ստանդարտացված մոտեցումներով իրականացնելու նպատակով սահմանվել և ներդրվել են քրոնիկ վիրուսային հեպատիտների դեպքի ստանդարտ սահմանումները, կանոնակարգվել է վիրուսային հեպատիտներով հիվանդների վարման գործընթացը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, մասնավորապես.

- 1) ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համակցված համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N-3.1.1-030-2015 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 59-Ն հրաման,
- 2) ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համակցված համաճարակաբանական հսկողություն մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 3691-Ա հրամանը:
- 3) ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի «Բուժաշխատողների համար վիրուսային հեպատիտ Բ-ով, Ց-ով հիվանդների վարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 3667-Ա հրամանը:
- 4) ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ներարկումների հաշվառման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 3193-Ա հրամանը:
Վիրուսային հեպատիտների ՀՀ-ում վիճակագրական տվյալների ապահովման նպատակով լրամշակվել և ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 3385-Ն հրամանով հաստատվել է «Արձանագրված վարակիչ հիվանդությունների, սննդային, քիմիական թունավորումների և ճառագայթային ախտահարումների վերաբերյալ» վարչական վիճակագրական հաշվետվական 85 ձևը, որտեղ ներառվել են վիրուսային հեպատիտներ Բ-ի քրոնիկ և Ց-ի սուր և քրոնիկ դեպքերը: Այս հաշվետվական ձևը ներառվել է «Հիվանդությունների հսկողության էլեկտրոնային համալիր (ինտեգրացված) համակարգ»-ում:

ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 3919-Ա հրամանի համաձայն հանրապետական մակարդակում ներդրվել է տեղեկատվական էլեկտրոնային բազա, որը հնարավորություն է ընձեռում իրականացնել վիրուսային հեպատիտների, համաճարակային իրավիճակի ամսական վերլուծություններ՝ ըստ առանձին պատճառագիտական ձևերի բոլոր մակարդակներում,

«Քաջարան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում արձանագրված ՆՀՎ-ի դեպքերի հետ կապված՝ ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի հունվարի 19-ի թիվ 40-Ա հրամանի համաձայն, ՀՀ առողջապահության նախարարության մասնագետների կողմից իրականացվել է ներհիվանդանոցային վարակների կանխարգելման միջոցառումների գործող իրավական ակտերին համապատասխանության ուսումնասիրություն, որին զուգահեռ բուժաշխատողներին ցուցաբերվել է մեթոդա-գործնական աջակցություն՝ ՆՀՎ-ի կանխարգելման, վարակի հսկողության ծրագրի գործադրման հարցերով:

Կատարելագործվել է վիրուսային հեպատիտ Բ-ի, Ց-ի ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»-ի Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի գործունեությունը՝ վիրուսային հեպատիտների տեսանկյունից, մասնավորապես.

Ռեֆերենս լաբորատոր կենտրոնում գործադրվել են վիրուսային վարակիչ հիվանդությունների (հեպատիտներ Ա, Բ, Ց, Դ, ՋԻ ԻՖԱ մեթոդներով ախտորոշման մեթոդներ:

Արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների լաբորատոր ախտորոշումն ստանդարտացված մոտեցումների հիման վրա իրականացնելու նպատակով մշակվել է և սահմանված կարգով հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի լաբորատոր ախտորոշման գործողությունների ստանդարտ ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 3789-Ա հրամանը:

ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 15 -ի թիվ 3602-Ա հրամանով «Նպատակային քանակակազմերի շրջանում վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի նկատմամբ լաբորատոր հետազոտությունների գործողությունների ծրագիրը», որի շրջանակներում աշխատանքներ կիրականացվեն արտաընդերային վիրուսային հեպատիտների առումով ռիսկի խմբերի շրջանում լաբորատոր հետազոտությունների կազմակերպման և իրականացման ուղղությամբ, ինչը կապահովի կատարելագործել ռիսկի խմբերում արտաընդերային վիրուսային հեպատիտների վաղ հայտնաբերման գործընթացը:

Բնակչությանը վիրուսային հեպատիտների և դրանց կանխարգելման մասին իրազեկվածությունը ապահովելու համար իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1) Մշակվել և ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 3526-Ա հրամանով հաստատվել է «Վիրուսային հեպատիտների կանխարգելում» պաստառը, որը նախատեսվում է 2016 թվականին բաշխել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին,

2) Տարբեր հեռուստահաղորդումների շրջանակներում (Ար հեռուստաընկերություն, Արմենիա TV, Երկիր մեդիա և այլն) լուսաբանվել է վիրուսային հեպատիտների ներհիվանդանոցային վարակման դեպքերի կանխարգելման հարցերը:

3) 2015 թվակաին հունիսի 28-ին ՀՀ առողջապահության նախարարությունում կազմակերպվել է մամլո ասուլիս «Հեպատիտների դեմ պայքար» թեմայով:

Վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ պատվաստումների իրականացման գործընթացը բարելավվելու նպատակով մշակվել է «Իմունականխարգելման 2016-2020 ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն: Նախագծում ներառվել են դրույթներ ռիսկի խմբերի շրջանում հեպատիտ Բ-ի դեմ պատվաստումների իրականացման վերաբերյալ: